# Դաս 22. Աստվածաշնչյան առակներ և նորկտակարանային պատմություններ

Լրացուցիչ նյութ

## Աններող ծառայի առակը



Աններող ծառան

*Մի թագավոր կար, որն ուզեց իր ծառաների հաշիվները քննել: Երբ նա հաշվեքննությունն սկսեց, նրա մոտ բերեցին մի պարտապանի, որ միլիոնավոր ոսկի պարտք ուներ: Եվ քանի որ նա ի վիճակի չէր վճարելու այդ, տերը հրամայեց, որ նրան իբրև ստրուկի վաճառեն իր կնոջ ու զավակների հետ, վաճառեն նաև այն ամենը, ինչ ունի, և պարտքը վճարեն: Ծառան թագավորի ոտքերն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես բոլորը կվճարեմ քեզ»: Ծառայի տերը գթաց և պարտքը շնորհելով՝ տուն ուղարկեց նրան: Իսկ ծառան, հազիվ դուրս ելած, գտավ իր ծառայակիցներից մեկին, որը մի չնչին գումար էր պարտք իրեն: Ծառան, նրա կոկորդից բռնելով, խեղդում էր նրան և ասում. «Վճարի՛ր ինձ քո պարտքը»: Ծառայակիցը նրա ոտքն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես պարտքս կվճարեմ»: Բայց սա չուզեց լսել: Ընդհակառակը, գնաց և բանտ նետել տվեց նրան, մինչև որ պարտքը վճարեր: Երբ մյուս ծառաները տեսան պատահածը, շատ նեղվեցին. եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամենը, ինչ եղել էր: Այն ժամանակ տերը կանչեց այդ ծառային և ասաց. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի, որովհետև աղաչեցիր ինձ: Պետք չէ՞ր, որ դու էլ ողորմեիր քո ընկերոջը, ինչպես ես ողորմեցի քեզ»: Եվ տերը բարկանալով՝ նրան հանձնեց դահիճներին, որպեսզի պատժեն, և վճարի իր բոլոր պարտքերը:*